


#### 4. ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՏԱԱԲԵՐՎԱԾ ԻՐԵՐԸ

Մետաղե իրեր.—Գառնի ամրոցի միջնադարյան շերտերի պեղումների ժամանակ հայտնաբերվել են ղդալի քանակությամբ մետաղե իրեր և առարկաներ, պարաստված երկաթից, պղնձից և բրոնզից։ Մետաղե իրերի թվույն գործիքներ, գենքեր, սի քանի հարսարանքների մնացորդներ, պայտեր, դամեր, զարդեր և այլն։

Այս ամենը ցույց են տալիս մետաղի ու սետաղագործության դերն ու նշանակությունը միջնադարյան գյուղաքաղաքի բնակչության տնտեսության և կենցաղի մեջ հողոր դեր էին խաղում մանավանդ, երկաթի մշակման հետ կապված արհեստները, որը պարզ երեսում է նաև Գառնիի պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութի շնորհիվ։

Երկաքե իրեր.—Վաղուց ի վեր երկաթը վճռական նշանակություն էր ու ապացել բնակչության անտեսության և կենցաղի մեջ։ Նրանից էին պատրտաւում րազմաղան դործիքներ, գենքեր, հարմարանքներ և այլ իրեր։



Նկ. 5. Մանղաղ

Գառնիում գտնված երկաթե դործիքների թիվը մեծ չէ, սակայն, զրանքուշագրավ են իրենց կիրառական նշանակությամբ և ձեերով։

1950 թ. ամրոցի հյուսիսային 4-րդ աշտարակի մոտ 2 մետր խորության վրա գտնվեց X—XI դարերի մի մանղաղ, (№ 1964/189), որը հիմքի և ծայրի մասերում թերի է, բայց ունեցել է լայն (5,5 սմ) ու բավականաշափ հաստ կտրիլ (նկ. 5)։

1956 թ. Գառնիի հեթանոսական տաճարին կից VII դարում կառուցված կլոր եկեղեցու հիմքերից ոչ հեռու և նրանց հավասար խորության վրա, վաղ

միջնադարյան շերտում գտնվեց մի ամբողջական ուրագ, որի կոթառը դեռևս շատ հաստ չէ և աղեղնաձեւ տեսք ունի (տախտ. XII): Կոթառի վերին մասը ակոսով ու երկու կողմից գուրս ընկնող հավելվածներով սահմանագծվում է ցածի սասից: Այս ուրագն ունի ուրույն ձև, սակայն ավելի մոտ է ժամանակակից քաղցանի թաքուզակներին, (թերևս գործածվել է իրու այդպիսին), քան ուրագներին:

Թարերախտարար Հնարավորություն ունենք այս վաղ միջնադարյան (VII դ.) ուրագը համեմատելու ուշ միջնադարյան (XV—XVI դ.դ.) մի ուրագի հետ, որը գտնվել է 1952 թ. ամրոցի մուտքի մոտ ներսի կողմից: Այս երկրորդ ուրագից գտնվել է միայն կոթառը (№ 1966/85), իսկ կտրիչը կոթողի հետ միացման տեղից չարդվել է և լի գտնվել:

Բնորոշը սակայն հենց ուրագի կոթառն է, որը արտաքուատ արդեն ստացել է խորանարդի ձև և ոչնչով չի աարերվում մեր օրերում գործածվող ձեռնուրագի կոթառից: Ուշագրավ է, որ Դվինում XI—XII դարերի շերտում գտնված ուրագը (№ 1905/50) տարրերվում է Գառնիի, հնագետ վաղ միջնադարյան, նույնպես և ուշ միջնադարյան ուրագներից և իր ձևով, մի անցողիկ միջին տեղից գրավում՝ նրանց համեմատությամբ:

1950 թ. արևելյան 4-րդ աշտարակի մոտ գտնվեց մի երկաթե փոքրիկ մուրճ (№ 1964/182), որի կոթը նույնպես երկաթ է և միաձույլ է մուրճի դլախի հետ: Մուրճի ծայրը դրի բերանի պես աափակ է, իսկ հիմքը հարթ է և ունի քառակուսի կարվածք: Այս մուրճը հարմար է ոսկե, արծաթե և պղնձե իրեր, դարդեր պատրաստելու և դրվագելու համար, ուստի համարում ենք ոսկերչի մուրճ (նկ. 6թ):


1950 թ. դանված մի իր (№ 1964/183) ցածում լայնացող կտրիչ-բերան ունի, իսկ վերևից ջարդված է թերևս կոթառի մոտ Հնարավոր է, որ դա քարտաշի փոքրիկ կացնի կտրիչը լինի (նկ. 6դ):

1950 թ. դանված մի ուրիշ իր ունի գըի ձև, (№ 1964/188), սակայն երկաթը շատ է մաշված, ուստի այս ենթագործված կարող է թեական համարվել (նկ. 6դ):

1954 թ. III դարի բաղնիքի հատակից 60 սմ վերև հողի լիցքի մեջ դանվեց երկաթե իր (№ 1968/26), որը 6 սմ երկարությամբ, սրածայր շատ հասա դամի տեսք ունի, քիչ լայնացող գլխիքի տակ թել կապելու հարմար նեղացող վզով և 1.5 սմ տրամադիծ ունեցող բոլորակ կտրվածքով: Հավանարար դա որմնադրի ուղղաւարի ծայրի կախիչ է, որով որմնադիբը որոշում էր շարվող պատի—մակերեսի ուղղահայաց լինելը (նկ. 6ե):

Ոսկերիչ արհեստավորի գործիք է նաև երկու ծայրից տափտկ ու սուր մի երկաթե ձող (№ 1865/133), որով ոսկերիչը կարող էր փողագործված ներսուներ դատարել ոսկուց կամ արծաթից պատրաստվող իրերի վրա (նկ. 6դ):

1950 և 1951 թթ. Գառնիում գտնվել է նաև մեկական մկրատ, ավելի ճիշա մկրատի մնացորդներ: 1950 թ. դանվածը (№ 1964/85) մկրատի միջին մասն է միացնող գամով կտրիչների և թեերի մնացորդներով: Այս մկրատը, որը գտնվել է երկու մետր խորության վրա հողի լիցքի մեջ, իր թեերի լայն րացվածքով և կտրիչի հետ միանալու ձեռվ ստարերվում է Գառնիի մյուս մերատից (որը դանվել է ուշ միջնադարյան շերտում՝ 0,5 մետր խորության վրա), ինչպես և ՚միջնում XII—XIII դարերի շերտում դանված մկրատներից, ժամանակով նրանցից ամելի հին է և կարող է պատկանել VII—IX դարերին (նկ. 6է):




Նկ. 6. Արևաբն գործիքներ՝ 1) ուրագի կոթառ, 2) սսկերչի մուրճ, 3) քարտաշի ուրագի կտրիչ, 4) զուր, 5) ուղղալարի էակիչ, 6) սսկերչի փորագրական դրիչ, 7) մկրատի մի մասը:

Երկրորդ մկրատից պահպանվել է միայն մի թեր՝ ծայրը փոքր ինչ կոտըրված (№ 1965/125):

1951 թ. Հյուսիսային երկրորդ աշտարակի մոտ գտնվեցին երկաթե տափակ, հարթ ճյուղերով մի փոքրիկ ունելիի մնացորդները (№ 1965/204):

Գտնվել են նաև երկաթե ձողեր և շատ մաշված այլ բեկորներ, որոնք կարող էին գործիքների կամ գենքերի մասեր լինել, սակայն այնքան վատ են պահպանված, որ որոշակի ուշինչ ասել հնարավոր չէ:

Գառնիում հայանարերված երկաթե գործիքների թվին կտրելի է գասել և դանտկները, որոնք երկու ափի են՝ լժալվող դանակներ, որոնք դաշույնի տեսք ունեն, բայց շատ ավելի փոքր են նրանցից (№ 1964/155), (№ 1967/79), (№ 1967/88) և ծալվող գանակներ, որոնք կոթի հետ միանում էին լեզվակը հիմքի վրա արված անցքի մեջ ագուցվող գամով (№ 1964/149):




Նկ. 7. Երկաթե դանակներ:


Միջնադարյան րտղմատեսակ երկաթե ղենքերից գտնվել են դաշույններ և նետեր: Ի տարբերություն ավելի հին ժամանակների երկսայրի գաշույնների, գրանք համարյա բոլորն եւ միասայրի են: Դաշույնները ունենում էին դասապակի հտվելվածք, որի վրա երկու երեսից գամերի օգնությամբ փակցվում էին դասապակի ոսկորը կամ փայտե մասեր: Դաշույնների կորիլ շեղրերը լինում են մեծ կամ փոքր, լայն կամ նեղ, իսկ ծայրի մասում ուղիղ կամ փոքր ինչ կոր աղեղնաձե տեսք ունեն: Կան և այնպիսինները, որոնց միտյն բութ եղրի կամ մեջքի մասն է աղեղ կտպմում, իսկ սուր կողմը ուղիղ է լինում: Պատճենները են նաև երկսայրի գաշույններ (նկ. 8):

Նետերի ծայրերը լինում են աերեաձե, նշտարաձե, շեղտնկյունի կամ ձեղարդաձե, սուր բոլորակ և նեղ քառանիստ (կարվածքում քառակուսի) ձեի (նկ. 9):

Գանվել են երկաթից պատրաստված ուրիշ իրեր ևս, գրանց թվում կան ձիասարքի օղեր՝ փոկի անցքի մեջ անցնող լեզվակով և առանց լեզվակի, գոան օղ և իրար մեջ ագուցված այլ օղեր, որոնք ինչ որ սարքի մասեր են (նկ. 10):



Նկ. 8. Երկարեւ գալույններ:



ՆԿ. 9. Նետի ծալրեր:

Գտնվել են նաև մի քանի կեռեր՝ մեկը պատի մեջ ամրացնելու ժայրով, մյուսները Տ տառի ձերի (նկ. 11գ, դ), որի մի կեռը գցում էին հորիզոնական դիրք ունեցող մի ծողի կամ զլանի, իսկ մյուս ծայրից կախում որևէ իր: Թրիլիսիում կաաարված պեղումների ժամանակ, նման կեռերը հայտնաբերվել են շնարակած անոթները թրծելու հնոցներում և գրանցից կախվում էին թրծելիք անոթները. կեռի մի ծայրը գտնվում էր պատի մեջ ամրացված կամե ծողի վրա, իսկ մյուս ծայրին անցկացվում էր անոթի կանթը:

Ուրուց ձեւ ունեն միջնադարյան շերտում գտնված երկաթե ինչ որ իրեր: Դրանք լինում են աղեղնաձև կիսաշրջան, երկու երրորդ շրջանի ձերի, իսկ երկու





Fig. 10. *Бронзовые изделия*.

ծայրերում ու մեջտեղում ունենում են գամի ձկի հավելված (նկ. 11q, է): Կարելի է ենթադրել, թե դրանք ծառայել են իրրև ավանակի պայտ: Թերևս գրանցմի մասը ամրացվել է փայտե կահուրի ուսքերի կիսաշրջանաձև կամ սմբակաձև վերշավորության վրա՝ աալով նրանց ամրություն և զեղեցկություն: Գունվել է նաև զգրոցի մի երկաթե օղ—բռնակը:




Նկ. 11. Երկաթե իրեր՝ օղեր, ձող, կեռեր, պայտաձև իրեր, զգրոցի բռնակ:

Պեղումների ժամանակ հաճախ հայտնաբերվում են նաև եզան և ձիան երկաթե պայտեր և նրանց գամերը, որոնք ունենում են հաստ և փռված գլուխի (նկ. 12):

Պայտար արհեստավորները ձիերը կամ եզները պայտելուց առաջ նրանց սմբակները կամ կճղակները տաշում-հարթում էին մանգաղաձև, բայց մի կամ երկու կողմից բռնակ ունեցող գործիքով, որից մի օրինակ (նկ. 12 ներքեւց աջ կողմում) գտնվել է ամրոցի մուտքի մոտ (№ 1966/86):

Միջնադարյան Հայաստանում երկաթից պատրաստում էին նաև խաչեր, դրանցից մի օրինակ դտնվել է Գառնիում, սակայն թերը չարգված են և մնում է կենտրոնական մասը. թերի հատուան տեղուած գրված է քար ագուցանելու րուն, ինչպես Աշոտ Երկաթին վերագրվող հայտնի խաչի վրա, որ



Նկ. 12. Եղան և ձիու պայտեր, պայտի դամ, պայտարի առաջին:

պահպում է էջմիածնի վանքի թանդարանում Երկաթի մի շատ փոքրիկ խաչ էլ գտնվեց վաղ միջնադարյան զերեգմաններից մեկում և դա պեղված 25 դերեզմաններում դտնված միակ իրը եղավ:

Ինչպես աեսնում ենք, Գառնիում հայտնաբերված երկաթե իրերը, թե՛ւ քանակով մեծ չեն, բայց թե զործածությամբ և թե ձևերով բազմազան են և բազմապիսի, մի հանգամանք, որը խոսում է երկաթի ապրածված լինելու և լայն զործագրություն ունենալու մասին:

Պղնձեա և բրոնզե իրեր:— Պղնձից պատրաստվում էին տնային տնտեսության մեջ օգտագործվող անոթներ, առարկտներ, կենցաղուիին իրեր և պարգեր:

Եթե երկաթից իրերը պատրաստվում էին միայն եռելու եղանակով, ապա պղնձից իրերը կարելի էր պատրաստել ինչպես կոելու, նույնպես և ձուլելու եղանակով: Բրոնզե իրերը ձուլվում էին:

Գառնիում հայտնարերված պղնձեա և բրոնզե իրերը նույնպես բաժանվում են երկու խմբի՝ կոածու և ձուլածու:

Մողայիկ հատակով բաղնիքից քիչ դեպի հյուսիս-արևմուտք 1955 թ. բացված մի կարասի մեջ գանվեց պղնձեա կոածու մի թաս՝ դեպի վեր լայնացող եղբերով և ուռուցիկ գոտիով և մի երկարուկ զավաթ (նկ. 13ա, բ), որի հատակը չը պահպանվել, ուստի նման է մի ծայրում լայն, մլուսում նեղ խողվակի:

9—10 սմ բարձրությամբ պղնձեա մի թասի կես էլ գտնվել է ամրոցի մուտքի մոտ (№ 1967/61): Կոելու եղանակով են պատրաստված բաղնիքի շենքից ոչ շատ հեռու միջնադարյան շերառու գտնված երկու փոքրիկ ճրագներ (№ 1966/83), (№ 1967/62), որոնք մի կողմից ունեն կտուց պատրույդի համար (նկ. 13գ, դ):

Այս ճրագներից մեկի (№ 1967/62) հետ միասին գանվեց նաև պղնձեա կոածու ափսեկ՝ հորիզոնական դիրքով եա ծուած շրթի բեկոր (№ 1967/62): Կոածու իրերի վրա կանթերը երբեմն էլ կարկասանը կցցնում էին պղնձեա գամերի օդնությամբ: Նման անոթի բեկորները հայտնարերվել են 1950 թ. պարսպի արևմտյան 7-րդ աշաբարակի մոտ: Ուշագրավ է ամրոցի հյուսիսային պարսպից ոչ հեռու բացված միջնադարյան շինարարությունների մնացորդների մեջ գտնված փոքրիկ կշեռքի պղնձեա կոածու նժարը (նկ. 13ե), որի եղբերից երեք անցք է բացված թել անցկացնելու համար (№ 1963/29): Բարակ ու թեթև թիթեղից օ, օ սա տրամագծով նժարներ ունեցող կշեռքով կարելի էր կշռել միայն մի քանի գրամ, հեաւսարար այսպիսի կշեռքը կարող է գործածվել ոսկերիշի, դեղագործի նամակած մի իր չէ ավելի փոքր շափի, այն է՝ 5,5 սմ արամագծով (№ 1963/36) գտնվել է 9-րդ աշաբարակի մոտ:

Գանված պղնձեա կոածու իրերի թվին են պահպանում նաև մի մատանի և այլ բեկորներ, որոնք այնչափ են մաշված, որ դժվար է ասել, թե ինչ իր մասեր են:


Զգալի է նաև պղնձեա և բրոնզից ձուլված իրերի թիվը:

Ձուլածու իրերից շատ ուշագրավ են մի միջին մեծության գանդի բեկորները, որի արտաքին մակերեսի վրա վերևի մասում շուրջանակի անցնում է մի գոտի, իսկ դրանից ցած, մինչև զանդի շուրջի ամրող մակերեսը ոելիք գծերով բաժանված է պասկաթերթերի: Զանդի ցածի եղբերը պսակվում է ուռուցիկ զոահով:

Մի փոքրիկ զանդ էլ, նույնպես ձուլածու, գանվել է ամրոցի մուտքից ոչ հեռու: Սա ունի ուռուցիկ ելուսաներ, ուսերի վրա և գոտի՝ ցածի եղբերի մոտ (№ 1967/59): Այս զանդերի շափերից զաաւով կարելի է ասել, որ մեծ զանգը գործածվել է ուղարի վզից կախելու, իսկ փոքրը ուղարի կամ ծիու վզից կախելու համար: Կարավանների ուղաբերը կամ ծիերը զանգերով զարգարելը շատ հին սովորություն է: պահպանվելով հասել է մինչև մեր օրերը: Բացի

առ զանդերից, Դառնիում զանվել են նաև մանր ծվածեւ զանգակներ կամ բուժներ, որոնք թելի վրա շարված կապվում էին գրաստների (ձիերի, էշերի) վղին, կամ դործածվում էին իրրև խաղալիք մանուկների համար:

Միջնադարյան մի գերեզմանում (XII—XIII դդ.) 8—9 արեկան աղայի




1 2 3 4 5 6

Նկ. 13. Պահեծ իրեր՝ թաս, դավաթ, ձեթի ճրագներ, կղեռքի նժար (բոլորը կոածո), անոթի սափարիչ (ձուլածո):

Կմախքի մնացորդների հետ միասին գտնվեց բրոնզե բոծոծ և գրաֆիտից մի աշակերտական մատիա՝ քարե աաիտուակի վրա գրելու համար (նկ. 14դ): Այս բոծոծները ցածից ունենում են սովորական բացվածքը, իսկ լեզվակի փոխարեն նրանց մեջ լինում է զանգահար մի գնդիկ:

Հնում հայելիներ պատրաստառ էին մեաաղներից, դիխավորապես արձաթից և բրոնզից: Բրոնզե հայելիներ զանվել են նաև Գառնիում: Դրանցից

**Ճեկը 8,7** սմ տրամագծով բրոնզի շոշանակ է, որի հակառակ երևասը զարդարված է ոլորուն գեղեցիկ գարգերով և փոքրիկ ուռուցիկ գնդիկներով (№ 1965/108): Նույն այդ կողմից հայելին ունի փոքրիկ հավելված բոնակ: Մյուս հայելին (№ 1965/107) ունի նույն չափերը, բայց ձուլված է այլ կաղապարի օգնությամբ, քանի որ սրա հակառակ զողովրդ գարգերը այլ բնույթ ունեն, Դրանք տեգ-աեղ արված գծերի և գնդիկների խմբեր են: Այս հայելու մի կողը շարդվել է և թերի է: Գառնիում գտնվել են նաև բրոնզե այլ հայելիների բեկորներ:



Նկ. 14. Պղնձից և բրոնզից ձուլված զանդ, զանգակներ և դրաֆիտ:

Բրոնզե ձուլածո անոթների մնացորդներից գտնվել է միայն մի սափորի կափարիչը՝ սրածայր հավելվածով (№ 1965/111): Զուլածո գդալներից մեկը ճաշի գդալ է, որի մի մասն է պահպանվել (№ 1967/68), իսկ մյուսը երկար պոչով, բայց շատ փոքրիկ դդալիկ է, որպիսիները օգտագործում էին ոսկե-

րիշ, զեղագործ և ալքիմիկոս արհեստավորները։ Այսպիսի դդալներ դտնման նաև Դվինում։

Պղնձից և բրոնզից ձուլում էին այլեայլ նպատակների համար օդաագործվող խողովակներ։ Մի խողովակ 1 սմ տրամադրով և 15 սմ երկարությամբ դանվել է 1950 թ. պարսպի 7-րդ աշտարակի մոտ։ Խողովակի մի ծալրը թերի է, իսկ մյուս ծալրն ունի ուելեֆ պսակ (№ 1964/178)։



Նկ. 15. Պղնձան հայելի։

Միջին դարերում սովորական երեսվթ էր պղնձից կամ բրոնզից խաչեր ձուլելու Անիում շաա են դանվել նման խաչեր։ Երկու ձուլածու խաչ էլ դտրնվել է Գառնիում։ Դրանցից մեկը փոքրիկ է և իր ձեռվ հին, կարող է թվագրվել X դարով։ Մյուս խաչը մեծ է, բայց պահպանվել են միայն անկյուն կազմող երկու թեկոր, որոնց ծայրի ող խիստ որոշակի բողը զած տեսքը և փոսիկները բնորոշ են XII դարի համար։<sup>1</sup>


Շատ սովորական է եղել նաև բրոնզից կամ պղնձից զարդեր ձուլելու պույնիսկ առանձին արհեստավորներ էին զրագվում։ Պղնձից զարդեր ձուլելու արհեստանոցների մնացորդներ հայանարերվել են Դվինի միջնարերդում<sup>2</sup>, և Անիի հյուրանոցներից մեկին կից<sup>3</sup>, որը թվագրվում է XII—XIII դարերով։ Գառնիում այդպիսի արհեստանոց չի բացվել, բայց ձուլածու զարդեր դտնվել են։ Պղնձից է ձուլված մի հարթ ժապավենածե ապարանչան 0,6 սմ լայնքով, որի կենտրոնական մասը, թեև հարթ մակերես ունի, բայց ավելի բարձրագիր է երկու եզրերի համեմատությամբ։ Ավելի հաճախակի են բրոնզե օգերի, մատանիների դյուտերը։ Մատանիներից մի քանիսի վերին մասը լայն է լինում և ունենում է ակ ագուցանելու րուն, բայց միշին դարերում ի աարերություն անակա ժամանակաշրջանի առանց քարի կամ ակի մաաանիները ավելի հաճտի են հանդիպում։

Գտնվել են նաև բրոնզե վարսակալ մեծ քորոց դնդածե գլխով, դուռու օգեր և այլ իրերի բեկորներ։

1 Կ. Ղաֆարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները (Նկ. 150)։

2 Նույն տեղում (№ 150)։

3 И. Орбели, Каталог Ашхинского Музея древностей. С.-Петербург, 1910, стр. 107.




Նկ. 16. Պղնձե իրեր՝ խոզովակ, խաչ (ճուլածո), ձող օղագոր դլխով,  
զարդ ձուլելու կաղապար, մատանիներ, զդոլիկ:

Վերջապես, հիշատակության արժանի է 1,5 սմ տրամագծով և 2 սմ  
բարձրությամբ սափորաձև իր կամ զարդ ձուլելու բրոնզե երկփեղկ կաղա-  
պարի մի փեղկի գյուտը՝ քառախորան եկեղեցու հիմքից ոլ հեռու, որով  
պարզվում է նրա ժամանակը, այն է՝ վաղ միջնադարյան լինելու:

Պղնձե կռածո և ձուլածո իրերի մեծագույն մասը իր ընույթով այնպիսին  
է, որ չի կարող բերված լինել ուրիշ քաղաքներից, այլ պատրաստվել է աեղում

ն ցուց է տալիս պղնձագործական արհեստի տարրեր նշուղերի առկալությունը միջնադարյան ժառնի գլուզաքառաքուս:

Միջնադարյան ոսկերության և արծաթագործության նմուշներ Գառնիում դևսես չեն դտնվել, եթե չհաշվենք արծաթի բարերից հյուսված շրջանակների շղթա կաղող և անկյուններում ավելի բարդ ձևավորուս ունեցող մի զարդ, որը փակցված է եղել զեխտի կամ որևէ այլ գործվածքի վրա, որի հետքերը պահպանվում են՝ կամ մնտաղի գարգին (Ն 1966/72): Դա եարող է, դդնուտի օձիքի կամ փեշերի անկյուններում զրվող զարդ լինել, գուցե և փակցված է եղել որևէ այլ կիրառություն ունեցող զործվածքի վրա (նկ. 17):



Նկ. 17. Զարդ հյուսված արծաթյա թելերով:

Զգեստների վրա փակցվող ծաղկածն կամ այլ ձեկի մեաաղե հյուսածո զարդեր, ինչպես հայտնի է, գտնվել են նաև Անիում:

Քարե սարմեր և իրեր:—Հայկական լեռնաշխարհում շինարարության ինչպիս և զանազան սարքերի ու հարմարանքների համար պիտանի քարեր շտատ կամ և հայ ժաղովորի տնտեսության ու կենցաղի մեջ քարե հարմարանքները հնուց ի վեր խոշոր զեր են խաղացել:

Քարե տմինախոշոր սարքերը ջրազացի, մանավանդ ձիթանի քարերն էին: Դասնի զյուղի կենտրոնում դունվում է կտավատի ձիթանի հսեայական մեծության մի քար, որը միջնադարյան ժամանակներից է պահպանվել: Գառնիում եղել են և ջրազացնքը, որոնց մասին հիշաակություն գտնում ենք Գառնիի վիմադրական արծանագրությունների մեջ, սակայն այդ ջրազացների քարերը մեզ չեն հասել:


Գտնոնի պեղումների ժամանակ հայտնարերվել են աեղական բաղալտից պարտուաված բաղմաթիվ սանդեր և երկանքաքարեր: Կան մեծ ու փոքր սանդեր (նկ. 18), գտնվել են նաև զրանց քարե վարստնդներից մի քանիսր: Այս սանդերում ծեծում էին ձավար, աղ, իսկ կավաղործ արհեստավորները մանրում էին կավը, մանավանդ ջնարակի համար օգաազործվող զայլախաղը և ավաղը:

Երկանքաքարերը միջին զարերում լինում էին բոլորածե, ինչպես նրանք պահպանվել են մինչեւ այժմ: Երկանքաքարերից մեկը (վերին քարը) մնում է

<sup>1</sup> И. Орбели, Каталог Анийского Музея древностей, С.-Петербург, 1910.  
стр. 34—35.

կիսամշակ, մի հանգամանք, որը ցույց է տալիս, թե Գառնիում տարածված բաղալտե երկտնբաքարերը պատրաստվում էին տեղում:


Պեղումների ժամանակ ուշ միջնադարյան (XV—XVII դդ.) մի բնականում հայտնարերվեց քարից պատրաստված սանգածե, բայց ավելի բարակ պահեր և մեծ աարողություն ունեցող մի բոլորածե աաշտ, որի վերին մասում շրթից քըլ ցած բացված է մի անցք: Եթե զա բաղնիքի հարմարանք չի եղել, ապա կարող էր օգտագործվել թերես փոքր քանակությամբ խաղող ճղմելու համար:



Նկ. 18. Քարե սանգեր:

Ամրոցի ներսում մի բնակարանի մեջ գանվեց քարից պատրաստված մեծ խուփ, որի մակերեսը դարձրված է եղել վարդակներով և այլ դարձերով, եզրի մոտ ունի բարձրագիր բոնակ (նկ. 20), նման խուփերը կարող էին օգտագործվել իրրե կափարիչ բնակարաններում փորվող հորերը կամ խոշոր կարասները ծածկելու համար:

Պեղումների ժամանակ գտնվել են նաև սրաքարեր կամ հեսաններ: Դրանց բվում կան ավելի խոշորահաաիկ քարեր, որոնցով սրում էին գերանդի, մանգաղ և այլ գործիքներ՝ քարը շրով թրշելով: Մանրահաաիկ սրաքարերը շափերով էլ ավելի փոքր են և գործիքներն ու գանակները սրելուց առաջ քարը վրա յուղ էին քսում: Երկու տեսակի սրաքարերից էլ նմուշներ գտնվել են և




Նկ. 19. Երկանքներ:

բոլորն էլ զործածությունից խիստ մաշված վիճակում (նկ. 21): Սրաքարերից մեկի վերին ծալրը եռանկյունաձև բարակում է և վրան բացված է անցք, սրաքարը դուռուց կախելու համար:

Քարերից պատճենատում էին նաև բրուաի կոկիչներ (նկ. 21η), որոնց օղնությամբ հղկում էին կավե անոթների մակերեսները: Գունավոր հողի շփոթով պատճած և թրծած անոթներին՝ կոկելու շնորհիվ հաղորդում էր ողորկություն և փայլ:

Ամրոցի միջնադարյան շերառում դժնվել են մարմարե երկու դունդ մեկը 16 սմ տրամադով և շատ ողորկ մակերեսով (№ 1966/69) և մյուսը 10 սմ


տրամագիծ ունեցող և նույնպես ողորկ մակերեսով դնո՞ր կեսը։ Գտնվել է նաև մարմարե հարթ տախտակի բեկոր 2,5 սմ հաստութեամբ։ Միջնադարաւան գեղագործության վերաբերյալ բնագրերը թուլ են տալիս ենթադրելու։ որ մարմարն նման գնդերը և տախտակները օգտագործվում էին գեղորայքը արորելու (լուսելու) համար։ Հավանարար նույն նպատակով են օգտագործվել քարե փոքրիկ հավանքները և գասաաէները։ Վերջիններից մի նմուշ նույնպես գտնվել է Գառնիում (№ 1966/45):



Նկ. 20. Քարե խուփ, քանդակազարդ:

Գանվել են քառանկյունի ձեր-քարե երկու իրեր, ետքի կողմից հարթ և կոկ մակերեսով, իսկ վերին մակերեսի կողմից ոչ այնքան հարթ, մի ծայրում ունեն քիչ բարձրագիր պսակ, որի տակ կենտրոնական մասում անցք է բացված՝ թել անցկացնելու համար։ Դասելով քարի աեսակից (պեմզա կամ չեշաքար) և ձերից պետք է ենթադրել, թե դրանք օգտագործվել են իրրև րազնիքի տրորիչներ, որով լողացողները մաքրում էին ոտքերի կրունկները (№ 1964/242—1964/297):

Վերջապես պետք է հիշաաակել նաև իլիկների գլուխները, պատրասաված մեծ մասամբ կրա-ավազային քարերից կամ մերգելներից։ Իլիկի գլուխներն ունենում են 4 սմ արամագիծ, երկու կամ մի կողմից հարթ, կամ կորոնթարգ մակերես, երբեմն էլ՝ ծայրը հատած կոնի աեսք։





Նկ. 21. Արաքարեր և բըռուսի քարեկ կողմէ:



Նկ. 22. Մարմարե գնդեր, քարե հավանք և քարե կոկիլ-արորիչներ

Յուլհակության կամ անկվածագործության հետքերը Գառնիում դեռևս ան-  
նշան չափով են երեան նկել, Գործվածքի հետքեր, ինչպես ասվեց զերեռւս,  
ուանիվել են արծաթե հուսածող զարդի վրա, Ավելի ուշադրավ է կավլց պատ-  
րաստված ե ջնարսկած խնցնունի բեկորներ վրան աղուցված կոնաձև դիմով  
մի իր, որը հավանաբար ջուլհակի ուղղահայաց հաստոցի կախիկ է եղել  
(նկ. 23Դ):



Նկ. 23. Բնագրքը զլուխնուր քորից և կավից,  
ջուլհակի հաստոցի կավե կախիկ:

Գառնիում արտադրվել է ինչպես հասարակ, (անջնարակ), նույնպես և  
ջնարակած խեցեղեն, բայց հախճապակի լի արտադրվել, որի խեցիներն էլ շատ  
սակառ են հանդիպում և բերված են այլ տեղերից:

Ապակեղեն:—Հաճախակի են ապակյա անոթների և ապարանջանների  
բեկորների դյուտերը, Դրանք բազմազան են ըստ ձևի, դույնի և պատկանում՝

Են տարբեր ժամանակների՝ սկսած վաղ միջնադարից, մինչև ուշ միջնագարը, այդ պատճառով էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Միջնադարյան ապակու հնագույն օրինակներից են կանաչավուն հաստ ապակուց, լախ պսակով մի մեծ 22ի կարճ վիզը (№ 1966/58) և նման 22ի լուսակի կեսը (№ 1966/70), որի հասառությունը 4 միլիմետր է. պսակի հորիզոնական մասի լայնը 12 միլիմետր, գույնը կանաչավուն-երկնագույն նման I—III դարերի ապակիներին: Այդպիսի շատ հայտնի են եղել IV—VI դարերում: IV—V դարերով կարող է թվագրվել հասարաց գեղնավուն ապակուց պատրաստված թասի շորթի բեկորը, որի վրա պտտվող անիվի օգնությամբ տաշված հինգ շրջանաձեռ բլթակներ կան (ինչպես բյուրեղապակին է մշակվում): Նույն ժամանակաշրջանի մի շագանակագույն փոքր թասի շրթի բեկորի վրա կա հորիզոնական գոտի և ատամնավոր վերադիր դարձությունը պատրաստված է ականական մեջ մեծ ուղղակի գարող (1X1,3 սմ) 4 մմ բաղնձրություն ունի: Գտնվել են սակա անտիկ շրջանի պատուհանի հարթ ապահուց ոչնչով շտարրերվող բեկորներ: Շատ բնորոշ են հաստ, հարթ, քառակող մեծ շատ բեկորները րաց դեղնավուն, կանաչ երկնագույն երանգներով: Կա բոլորովին թափանցիկ թասի բեկոր: Գանվել են սակ նույն ժամանակաշրջանի անոթների և բաժակների բեկորներ:

IV—VI դարերի ապակեղենը անոթները ձներով մշակման և զարգարման առանձնահատկություններով և ամեն ինչով գեռես կրկնում է աստիճանակաշրջանի ապակեղործության արագիցիաները և փաստորեն կազմում է նրա շարունակությունը:


Միջնադարյան ապակին ավելի ու ավելի է տարրերվում անահիկ ժամանակաշրջանի ապակուց: Առաջանում են շրջանաձեռ հենակով և րարձր ոտքով գավաթները: Երրեմն գրանց շրջանաձեռ կամ սկավառակաձեռ հենակի վրա թեք գծեր են լինում: Այս գավաթները գանվել են VII—IX դարերի կուլտուրական շերաբում:

IX գարով կարելի է թվագրել թափանցիկ, բիշ ինչ դեղնավուն անոթի հառակը, որի վրա կրկնագիծ լայն շրջան է փորագրված:


Ավելի մեծ է XI—XIII դարերի ապակեղենի տարրերությունը հին ապակեղենի նմուշներից: Ապակյա անոթների պատճերի վրա արվում են վերագիր զարդեր, կապույտ փիրուզագույն զանգվածից կետեր և գծեր, վերջապես առաջանում է գույներով նկարադարդված ապակին, որը բնորոշ է XII—XIII դարերի համար (նկ. 24):

Ապակյա ապարանջաններ:—Գառնի ամրոցի ներսում կատարված պեղումների ժամանակ գտնվել են ապակյա ապարանջանների մի քանի տասնյակ բեկորներ: Հստ ձեմի գրանք լինում են հարթ մակերեսով և կտրվածքում կլոր, հարթ, բայց դրսի մակերեսը երրենթարդ, ներսից աափակ, կարվածքով ոսպնյակի ձեմի, լինում են և քառանիսա տպարանցուններ, իսկ ամենից հաճախակի են ոլորուն ապարանջանները, ըստ որում ոլորվածքը լինում է խիտ կամ նոսր, ավելի կամ պակաս ուղղակի:


Վարպետները աշխատել են ապարանջանների երես ծայրերը միացման տեղում ձևավորել, հաստացնելով կամ տափակացնելով, երրեմն ասես օձի գլխի աեսք տալով նրանց: Ապարանջանների պատճին սովորաբար լինում է ոչ թափանցիկ, սակայն կան և թափանցիկ կամ կիսաթափանցիկ ապակուց պատրաստված շաա օրինակներ: Սակավ հանգիպում են սակ փիրուզագույն ապակենման զանգվածից (ամալտայից) պատրաստված ապարանջաններ:



Տախտակ I. Ապակու բեկորներ:



Ապարանշանները բազմազաս են նաև ըստ գույների և երանգների: Հիմնական գույներն են՝ սև, կանաչ, կապույտ, դեղին, սակայն ավելի բազմազան են ապարանշանների երանգավորումները: Կանաչ ապարանշանների երանգներն են՝ դուրեկան կանաչը, բաց կանաչը, փոքր ինչ դեղնավունը. հաղիկ սկառելի կանաչավունը: Կապույտ գույնի ապակուց պատրաստված ապարանշանները սովորաբար ունենում են ոզորկ սակերես և շատ գնդեցիկ:



Նկ. 24. Ապակու բեկորներ՝ զծաղիք և գունազարդ:


Են, բայց նույնպես երանգավորված են: Ամենադուրեկան կապույտը լինում է կորալաի գույնի: Գա մուղին մոտեցող, բայց վճիտ կապույտ երանգն է: Հանդիպում են նաև բաց կապույտ, երկնադուլն, ավելի բաց երկնագուլն, բաց երկնադուլն-կանաչավուն ապարանշանների բեկորներ: Դեղին գույնը նույնպես իր երանգավորումներն ունի: Բացի մուգ դեղինից և դուրեկան դեղինից լինում են ավելի հաճախ բաց գեղին, հաղիկ նկաաելի դեղնավուն, դեղնականաշավուն ապարանշաններ: Փիրուզագույն լինում են միայն սմալտայից պատրաստված ապարանշանները:

Շաա շքեղ են սև ապակուց պատրաստված ապարանշանները, որոնք լինում են հարթ մակերեսով և նուրր ոլորուն:

Ապարանշանները պատրաստվում էին ինչպես կանանց, նույնպես և երեխաների համար: Համարյա ամրողական ապարանշանների արամագիծը 8,5 ոմ է, իսկ մի ամրողական բաց երկնագուլն, սակայն սպիաակ թաղանթով պտաված և հնաձև ապարանշանի տրամադիծը 4 սմ է հասնում: Պարզ է, որ եթե առաջինները պատրաստվել էին մեծահասակների համար, ապա վերցինը երեխայի ապարանշան է:

Առավել հին ապարանշանները, թվում է թե, փիրուզագույն գանգվածից և դուրեկան կապույտ տպակուց պատրաստվածներն են, որոնք ունեն ոզորկ:

Ներսում հարթ և դրսից կորընթարդ մակերես: Դրանք կարող են թվագրվել V—VII գարերով: Նրանցից մի քանիսի վրա գուացել է սպիտակ թաղանթ, որը սովորական իրիզացիայից տարրերվում է և խոսում է նրանց ավելի հին լինելու օգտին: Սակայն նման հին ապարանջանները բացառություն են կաղմում, Ապակյա ապարանջանները սովորական են դառնում և լայն գործադրություն ստանում ֆեռալական քաղաքի առաջացման և զարգացման ժամանակաշրջանում IX—XIII դարերում, դառնալով առավելապես շուկայի համար արտադրվող էժանագին զարդ (նկ. 25): Գառնիում գտնվել են նաև սմալտարասաված մատանիների բեկորներ:



Նկ. 25. Ապակյա ապարանջանների բեկորներ:

Ուկորե իրեր:—Անրոցի պեղումների ժամանակ շատ հաճախ են գարնվում ոսկորներ, որոնք սղոցված են և երևում է. որ նրանցից իրեր, առարկաներ են պարաստել. հաճախակի են մանավանդ եղջերուի եղջյուրների սղոցած մնացորդները, մանավանդ նրանց հիմքի մասերը, որոնք օգաագործել հնարավոր չեն: Բացի այդ մնացորդներից գտնվել են նաև ոսկորն պատրաստի իրեր և առարկաներ: Դրանցից պետք է հիշատակել իլիկների գլուխները, որոնք պատրաստվում էին կենդանիների վերջավորությունների հոգերի խրնձորակներից և երրեմն չել ավելի խոշոր էին լրնում քան իլիկների քարե գլուխները:

Գտնվել է վարագի ժանիքից պատրաստված մի շատ ուշագրավ գործիք, նման գյուղերում գործածվող կեմարներին, որոնցով կեռ էին մանում ճիլ խոտերից, պարան՝ կանեփի թելից: Ոլորվելիք կեմր կամ պարանը անցկացվում էր կեմարի կեռ ծայրին, իսկ հրմաքը մոռ լինում էր անցք, որի մեջ ագուցվող մեաաղե գամի վրա անցկացվում էր րոնակը, որը պատեցնելով մի մարգ մանում էր կեմր կամ պարանը, իսկ մյուար, որն ավելի հմուտ էր լինում, անընգնատ ավելցնում էր մանվելիք ճիլ խոտը եամ կանեփի թելերը: Կեմարի հիմնական մասը սովորաբ լինում էր այժի եղջյուրից, որի ծայրը աաքացնելով ծոել կեռ դարձնել դժվար չէր: Գառնիում գտնված կեմարը պատրաստված է վարագի ժանիքից, որի ծալը ծոել հնարավոր չէր, ուստի տաշել հարմարեցրել են լարը կամ պարանը վրան կապելու համար (№ 1966/2):


Գտնվել է ոսկորից պատրաստված տափակ, րայց երկու կողմից սրածայր մի գործիք (№ 1963/50), որը, թվում է, թե ըրուատի գործիք է, որով անում էին եավե անոթների դժագիր դարձերը:

Բնորոշ է, որ այդ ամանների գծագիր սարդը ավելի պլաստիկ է. այս ասես ճնշումով կատարված լինի, ոչ թե մետաղի սրածայր դործիքով քերված:



1 0 5 mm.

Տախտակ II. Ապակլա ապարանցաններ:



Գևոս թաց կամի վրա դժագիր դարդեր անելը հարկավ ավելի հարմար էու սոկորի բան մետաղե զործիքով:

Ասկորից է պատրաստված մի փոքրիկ իր (1,6 սմ երկարությամբ), որի մեջտեղ սեղ է, իսկ ծալրերը լախանում են (Ն 1967/56): Նման սործիքով հեղունում—կոկում էին բամբակի թելլու:


Գտնվել է նաև ոսկորե սանրի կեսը, որի մի կողմի ատամները ավելի խոշոր են եղել, իսկ սյուս կողմինը սանր, ինչպես ժամանակակից սանրերինը (Ն 1965/193): Զվածիք կտրվածքով մի ոսկորի ձողի մեջ երկարությամբ անցը է բացված և երկու ծալրերից սղոցված է (Ն 1967/66): Այս ձողը մանր հաստիածներով սղոցելով կարելի էր ստանալ ուղունքներ, որպիսի նմուշներ Գտնիում դանվել են:

Ոսկորից պատրաստել են նաև երաժշատկան գործիքներ, մասնավորապես սրինգ խոշոր թոշունը աղղոռսկրից պատրաստված սի սրինգ դտնվել է մուզավիկ բազնիքից ոչ հետու միջնադարաւան շերտում: Սրինգը բավականաշափ երկար է, թեև երրորդ անցքի մոտից ջարդված է (Ն 1969/82) (Նկ. 26):

Ուրանիներ:—Բնակչության կենցաղի մեջ սովորական են եղել օանաղան զարգերու վերեւում խստիկ մեաւալներից պատրաստվող ապարանջանների: Ժամանիների, ականջօղերի, ապակյա ապարանջանների սասին: Այդ ասենից բացի ամեն տեսակի նյութից՝ քարից, ապակուց, կամ ապակու խմորից, մետաղներից, կավից, ոսկորից պատրաստում էին զանազան աեսակի սկզբներ և կախիկներու շին ժամանակի ուղունքներից դրանք տարրերվում էին իրենց ձեւերով, աեսրով, մշակման առանձնահատկություններով: Միշին դարերի համար բնորոշ է բոլորովին նոր տիպի ուղունքների և կախիկների երեան դալը: Դրանք պատրաստվում էին հախճապակու համար նյութ ծառալող սպիտակ կամից և ժամանակում բաց երկնաղույն ջնարակով: Նման ուղունքներ և կախիկներ գտնվել են XIII—XIV դարի շերտերում և միանդամայն բնորոշ են այդ ժամանակաշրջանի հասար:

Դրամներ:—Գառնիում պեղումների, ինչպես շինարարական այլ աշխատանքների ժամանակ դրամներ շատ հաճախ են հայոնաբերվել: Դրանց ուսումնասիրությունով դրազված է Պետական պատմական թանգարանի դրամագետ և տատի կսահմանափակվենք մի քանի բնդանուր տեսելություններ հազորդելով:

Գտնվել են ինչպես հելլենիստական-հռոմեական ժամանակաշրջանի, նույնպես և միջնադարյան դրամներ, բայց վերջիններիս թիվը անհամեմատ ավելի մեծ է: Աղարական դրամները քիչ են գտնվել և դրանք պատրաստված են տուփելատիս արծաթից: Արաբականներից փոքր ինչ ավելի է բյուզանդական զրամների թիվը, որոնք պատրաստված են ոսկուց և պղնձից: Գառնի զրամի բնակրնները երկու անգամ գտել են բյուզանդական ոսկու դրամների զանձ, զմրախտարար տյու գանձերից հատ ու կենու դրամներ են Պետ. պատմական մանղարան հասել: Էացի սելչուկյան առանձին դրամներից, 1957 թ. դռնվեց և 54 պղնձադրամներից բաղկացած զանձ: Հաճախակի է վրացական, մանափանդ թամար թագուհու և Դավթի դրամների գյուաները: Մեծ է մոնղոլական Ժոմանակաշրջանի դրամների թիվը: 1941 թ. արծաթե և պղնձե միջնադարյան զրամների մեծ զանձ է գտնվել Գառնի զյուղի արևելյան ծայրի ջրանցքաշինության մոմանակի: Գտնձի մեջ եղել են տարրեր ժամանակների դրամներ:



Եկ. 26. Ռակորհ իբեր՝ կեմար, ձող, սահնա, որկիչալ:

Մոնղոլական հետաղա ժամանակների արծաթյա դրամների մի մեծ դանձ դանվել է զյուղի հյուսիս-արևելյան ծայրին (1958), Գանձր գտնող կող-տնտեսական Ծնիկ Բարայանը Պետական պատմական թանգարանին է հանձ-սել 500 դրամներ, որոնք հնագետ մեզ հաղորդեց թանգարանի դրամադետ Խ. Ա. Մուշեղյանը, մոնղոլական են և վերաբերում են XIII դ. երկրորդ կեսին:

Գառնիի առավել ուշ դրամները կտրված են իրանում, Թուրքիայում և Եվրոպտկան երկրներում: Վերջիններից մեկը Հեսենի լանդգրաֆի, սկզբան Տրանսիլվանիայի պրինցեպսի արծաթե խոշոր դրամներն են կարված XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին:

Եթև Իիշնաղարյան տարրեր պետությունների դրամների դյուտերը նշա-նավորում են Հայաստանի անտեսական, առևարական և քաղաքական կա-պերը մի շարք երկրների հետ, և ցուց են տալիս տեղական շուկայի առկայու-թյունը միջնադարյան Գառնի դյուդաբազարում, ապա XVI—XVII դարերի կամ ուշ միջնադարյան դրամները դրսենորում են հայ վաճառականների կա-պերը իրանի, Թուրքիայի և Եվրոպայի հետ: Բացի այդ, իրանական և Թուր-քական դրամները դործադրություն ունեին և Հայաստանում: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ այդ դրամները կարող էին Գառնի ընկնել նաև այդ նրկունքից անրնդհաա Հայաստանի վրա հարձակվող հրոսակների միջո-ցով: